

Կ Դ. Դուրգարյան

ՍԱՅԱԹ-ՆՈՎԱՅԻ ՀԱՆԳԱՐԱՆԸ

Չափաժողովում՝ լինի բանաստեղծություն, ժողովրդական երգ, տաղ, էպոս կամ աշուղական խաղ, ամենակարևոր հանգամանքներից մեկը հանգավորումն է, որով ապահովվում է երգի երաժշտականությունը: Որքան որ կանոնավոր շեշտադրությունն է անհրաժեշտ՝ սահուն ու ուղիղ բանաստեղծության համար, այնքան էլ՝ կանոնավոր հանգավորումը: Աշուղական արվեստում ես այս հանգավորումը խաղում է մեծ դեր, մասնավորապես, երբ խաղն արտահայտվում է ասմունքով, առանց եղանակի: Ուստի մեծ աշուղների երգերը, կատարյալ հանգավորում ունենալու պատճառով, չեն տուժում անգամ կարգալու ժամանակ, նրանք հնչում են սահուն ու կանոնավոր՝ ոտանավորի նման:

Սայաթ-Նովայի հանգարանն ավելի մեծ հետաքրքրություն է ներկայացնում, քանզի հանգարվեստը ոչ մի աշուղի կամ միջնադարյան տաղերգու բանաստեղծի մոտ այդքան կատարյալ չէ: Ինքը՝ մեծ երգիչը, արտակարգ ուշադրություն է դարձրել երգերի հանգավորման վրա: Դժվար է գտնել որևէ խաղ, ուր անհաջող կամ թույլ հանգեր հանդիպեն, իսկ եթե կան այդպիսիները, ապա համոզված կարելի է պնդել, որ կամ երգիչն չեն, կամ աղավաղված են: Այս իմաստով դժվար է հավատալ, որ վերջին ժողովածուում տեղ գտած մի քանի խաղը պատկանելիս լինեն հանճարեղ աշուղի ղալամին, ժողովածուին կազմող Մ. Հասրաթյանը ես միանգամայն ճշմարտացիորեն այդ երգերը զետեղել է հավելվածում միայն: Սրանք ոչ միայն բովանդակությամբ, այլև հանգավորման անսովոր ու պրիմիտիվ ձևով չեն հիշեցնում երգչի որևէ հայերեն խաղը: Այնուամենայնիվ, հանգարանը ամբողջական դարձնելու համար քննության են քառնում Սայաթ-Նովայի հայերեն բոլոր հայտնի խաղերը, որոնց թիվը ցայսօր 68 է միայն:

Սայաթ-Նովայի հանգարանի աղբյուրները բազմազան են ու առատ. նա օգտագործել է իր ժամանակի աշուղների ստեղծած բազմաթիվ հանգերը (մեծ մասամբ թուրքերեն), միաժամանակ ստեղծել է բազմաթիվ ու բազմապիսի հանգեր՝ կենդանի ժողովրդական լեզվի մարգարիտներից: Այս վերջին հանգամանքը հույժ կարևոր է ու հետաքրքրական, քանզի հայերեն լեզվով մինչև Սայաթ-Նովան քիչ աշուղներ են երգել, երգողներն էլ իրենց տաղանդով ու արվեստով մեծ չեն եղել մեր երգչից, որ թողնեին զորեղ ու բնորոշ ազդեցություն նրա տաղերի վրա: Սայաթ-Նովայի թուրքերեն (կամ ինչպես վերջերս անվանում են՝ աղբբեջաներեն) երգերի հանգավորումը այնպիսի բնորոշ ու ինքնատիպ պատկեր չունի, ինչպես հայերեն երգերինը, և սա միանգամայն հասկանալի է: Թուրքասաց աշուղների թիվը (հայ թե թուրք) մեծ էր, նրանք մշակեցին աշուղական արվեստի զանազան ձևեր, կանոններ, շեշտական և ուղիղական խաղերի տեսակներ՝ կարգալու, ավելի ճիշտ արտասանելու և եր-

գելու համար։ Ուստի Սայաթ-Նովան էլ, հետևելով հին վարպետների (ուստա-քարանների) օրինակին, հորինում էր իր թուրքերեն տաղերը՝ օգտվելով, անշուշտ, աշուղական արվեստի տեխնիկական բոլոր ձևերից, եղանակներից, նույնիսկ օգտագործում էր պատրաստի հանգեր, ինչպես բոլոր աշուղները։ Սակայն հայերեն աշուղական երգեր քիչ կային, հայոց լեզուն (ժողովրդական բարբառները) միատարր չէր, ուստի դժվար էր հետևել մեկ որևէ կանոնի, վաղօրոք մշակված ձևի։ Նրա նախորդներից ամենամեծը Նաղաշ Հովնաթանն էր, որի շատ արտահայտություններն ու հանդերը նկատելի են նաև Սայաթ-Նովայի տաղերում։ Շուտով թե՛քը՝ Սայաթ-Նովան այնքան վարպետացավ հանգեր ստեղծելու արվեստում, որ ոչ միայն գերազանցեց իր վարպետներին, այլև դարձավ այս իմաստով անգերազանցելի վարպետ իր հետնորդների համար։ Նա կենդանի ժողովրդական լեզվից վերցրեց գոհարեղեն բառեր և նրանցով ստեղծեց իր զրնգուն, միաժամանակ մեղմ ու ախորժալուր հանդերը։ Գարեփորն այն է, որ բանաստեղծը բառեր ստեղծելիս խտրություն չի դրել, ճիշտ այնպես, ինչպես բարբառում, ժողովրդի շուրթերի վրա բոլոր բառերը հարազատ են հնչում, եթե հասկանալի են։ Միանգամայն սխալ կարծիք է, թե Սայաթ-Նովան դիտավորյալ է գործածել «օտար» բառեր։ Այդ բոլոր բառերը խալիսի բառապաշարում կան և բոլորովին հարազատորեն են հնչում։ Եթե ժողովրդին անհասկանալի բառեր գործածել մեր աշուղը, նրա երգերը չէին կարող տարածվել և ներգործել ժողովրդի հոգեկան աշխարհի վրա։ Այդ արտահայտիչ ու գունեղ բառերի խտրությունն է, որ դրսևել է շատ բանաստեղծների (Բր ուսով, Թումանյան, Զարենց) և բերել այն ճիշտ եզրակացության, թե Սայաթ-Նովան ամենամեծ ժողովրդական բանաստեղծն է կովկասյան իրականության մեջ՝ տասնութերորդ դարում։ Աշուղի հանգարանը լիակատար ու պարզ գաղափար է տալիս նրա բերթողական հանճարի մասին։ Զե՛ որ ողջ մեր միջնադարյան քնարերգությունը տառապում էր միօրինակությամբ, հանգերի նույն, միապաղաղ կրկնություն, որ ձանձրույթ էր առաջացնում։ Սայաթ-Նովան ևս փր մի շարք հանգախմբերը գործածել է տարբեր տաղերի մեջ, սակայն ուրիշ կապակցություններում, ուստի չի զղացվում միապաղաղություն։ Նա առանց խտրության իրար հետ հանգավորում է հայերեն և օտար բառերը այնքան ներդաշնակ կերպով, որ հնարավոր չէ փոխարինել մեկ բառը մեկ ուրիշ բառով։ Դա է պատճառը, որ թարգմանիչներն անգամ օգտվել են Սայաթ-Նովայի հանգարանից՝ անփոփոխ, առանց թարգմանելու հանգ կազմող բառերը, վախենալով խանգարել երգի երաժշտականությունը։

Я в жизни вздоха не издам,
доколе джан ты для меня!
Наполненный живой водой,
златой пинджан ты для меня!

(Թարգմ. Վ. Բրյուսովի)։

Սայաթ-Նովայի ստեղծած շատ հանգերն օգտագործել են հետագա աշուղներն իրենց խաղերում։ Անգամ բանաստեղծներն օգտվել են Սայաթ-Նովայի հանգարանից՝ գաղելներ կամ աշուղական չափերով ոտանավորներ պոեիս։ Զարենցն, օրինակ, իր «Տաղարանում» այնքան շոայլորեն է օգտա-

դործել Սայաթ-Նովայի հանգերը, որ եթե զրական կատարալ լեզուն չխան-
գարեր, կստացվեր այնպիսի տղավորություն, թե մոխամմաղանման այդ տա-
ղերը գրել է ինքը Սայաթ-Նովան: Բերենք մի երկու նմուշ.

Երազ տեսա Սայաթ-Նովեն
Մոռա եկավ սազը ձեռին,
Հրի նման վառման գինու
օսկեջրած քասը ձեռին,
Նստեց, անուշ երգեր ասավ՝
Հին քամանչի մասը ձեռին,
էնպես ասավ, ասես ունեք
երկնքի ավմասը ձեռին...¹

կամ

Ամեն տեսակ երգ երգեցի—
ամենից լավ տաղն է էլի,
Սայաթ-Նովի դրախտային,
անմահական խաղն է էլի,
Ինչքան էլ լեն զուքաններում
ռանգ-ռանգ մրգեր ըլին շարած՝
Անմահական մրգերի տեղ —
շահնշահի բաղն է էլի...
Գնա կուղես Ֆռանգստան,
ամենումեծ քաղերք տես՝
Սրտիդ ուզած տեղը միակ—
սիրեկանի լաղն է էլի,
Վայ քեզ, Չարենց, լավ իմացիր,
ականջ արա սիրեկանին՝
Ամեն բանից լավ ու անուշ
սիրեկանի դաղն է էլի²...

Չարենցի մյուս տաղերում ևս հանդիպում ենք Սայաթ-Նովայի հանգա-
րանից հանած բազմաթիվ հանգախմբերի՝ վարդ-զարդ-մարդ, բաց-լաց-հաց,
բան-խան-ջան, հովի-ծովի-սանովի, դար-էթիբար և այլն:

Աշուղական երգերում նույնահանգ բառերի կարիքն ավելի է, քան սովո-
րական բանաստեղծություններում, քանզի, ըստ կանոնի, աշուղական խաղի
բոլոր տները պետք է ունենան նույնահանգ վերջավորություն, և ամեն տան
վերջին տողը պիտի հանգավորվի առաջին տան հանգերով: Առաջին տան բո-
լոր տողերը (4, 5 կամ 6) նմանահանգ են. մյուս տների Ա, Բ, Գ տողերը
նույնահանգ են, իսկ վերջին տողը հանգավորվում է առաջին տան տողերի
հանգով, այսպես՝ ԱԱԱԱ, ԲԲԲԱ, ԳԳԳԱ, ԴԴԴԱ, և այլն: Այս շորս տնից
լողկացած խաղում պետք է լինի 7 բառ Ա հանգով, 3 բառ՝ Բ հանգով, 3 բառ
Գ հանգով և 3 բառ՝ Դ հանգով: Իսկ երբ խաղը հինգ, ութ և ավելի տներ ունի,
բնական է, որ Ա խմբի հանգարար բառերի թիվն ավելի է մեծանում:

¹ Ե. Չարենց, հատ. I, Երևան, 1963, «Ճաղարան» շարքից:

² Նույն տեղում:

Հանգարանը թերթելիս առաջին հայացքից երևում է, որ Սայաթ-Նովան իր երգերը մեծ մասամբ օտար բառերով է հանգավորել: Դա ակներև փաստ է և միանգամայն հասկանալի ու բնական: Նախ՝ աշուղական արվեստն ավելի զարգացած էր արևելյան ժողովուրդների մոտ, Կովկասում ևս աշուղների զգալի մասն ստեղծագործում էր թուրքերենով, որ ժամանակի միակ լեզուն էր՝ հասկանալի բոլոր հարևան ժողովուրդների համար: Շատ հայ աշուղներ երգում էին թուրքերեն երգեր, քանզի այդ լեզուն ամենատարածվածն ու հարուստն էր տվյալ ժամանակաշրջանում: Ը՛ներ գրական հարուստ լեզուն՝ գրաբարը աշուղական երգերի համար անհամապատասխան էր, քանզի ժողովուրդը, խալիսը չէր հասկանում: Իգուր չէր գանգատվում մեր նոր գրականության նահապետ Խ. Աբովյանը, թե ժողովուրդը սիրով ունկնդրում է աշուղական երգերը օտար լեզվով (թուրքերենով), քան կարդում գրաբար մատյանները, որ միանգամայն անհասկանալի են դառնել: Ուրեմն Սայաթ-Նովայի գործածած բառ ու բանը միանգամայն հասկանալի էր ժամանակի թիֆլիսաբնակ հայությանը: Աշուղն օտար բառերը գործ է ածում մայրենի լեզվի հարազատության մեջ և ենթարկում հայերենի լեզվական կանոններին: Դա երևում է Խրանից, որ օտար բառերով կազմած հանդերձ մեծ մասը թեքված (հոլովված) ձևով են հանդես գալիս (ռանգով, բաղով, յաղեմեն և այլն): Հայերեն օժանդակ բայերի օգնությամբ են դրսևորվում շատ օտար բառերով ստորոգյալներ (ղաստ անիմ, դուլուղ արա և այլն): Բացի այս բոլորից Սայաթ-Նովան ստեղծել է և աննման հանգեր հայերեն բառերով, որոնց թիվը շատ մեծ է: Հայերեն բառերով ստեղծված հանգերից առավել հաջողներն են՝

օլրեն	ահ	րերած	բաց	նուռ
գրեն	մահ	մերած	լաց	կուռ
կըրեն	շահ	էրած	թուց	դուռ
ջիռանում	ձեռնեմեն	էս	հիտ	
հիռանում	կըռնեմեն	կես	դիտ	
միռանում	նոռնեմեն	տես	սիտ և այլն:	

Երբեմն պարզ բառերը հանգավորում է բաղադրյալ կազմություն ունեցող բառերով, որով ավելի է շեշտվում հանգարար բառը: Այսպիսի օրինակներ շատ կան նրա տաղերում.

տեսանիս	ասիմ	դունիս	լարիմ
կես անիս	թասիմ	չունիս	ճարիմ

Հայերեն բառերով հանգերը հաճախ կրկնվում են զանազան խաղերում տարբեր կապակցությունների մեջ, տարբեր բառերի հետ: Որոշ հայերեն հանգերը՝ կնված են երկու, երեք, չորս, հինգ և ավելի անգամ: Այսպես՝ ՄԱՀ-ԱՀ-ՇԱՀ գ. Ժ է ածել 15, 26, 31, 42 խաղերում, իսկ ԼԱՅ-ԹԱՅ-ԲԱՅ հանգախուժքը կրկնված է 3, 14, 41, 47, 51 խաղերում: Կրկնված են նաև օտար բառերով կազմված հանգերը: Այսպես՝ ՔԱՔԱՔ-ՍԱՔԱՔ հանգիպում ենք 19, 48, 49 խաղերում, ՀԵՅՐԱՆ-ՋԵՅՐԱՆ՝ 6, 8, 24, 29 խաղերում, ԲԱՂ-ԴԱՂ՝ 6, 14, 30, 49 խաղերում, ԽԱՐ-ՅԱՐ՝ 9, 28, 45 խաղերում և այլն³:

³ Երգերի համարներն՝ ըստ Մ. Հասարթյանի «Սայաթ-Նովա» դրքի. Երևան, Հայպետհրատ 1959:

Սակայն, մեծ մասամբ կրկնվում են ոչ թե ամբողջական հանգախմբերը, այլ նրանց բաղադրիչ բաղադրը՝ այլ հանգախմբերում: Խառն հանգերը, որ հանգարանի մեծ մասն են կազմում, նույնպես հաճախ են կրկնվում: Այնուամենայնիվ այդ կրկնվող հանգերը ձանձրույթ չեն առաջացնում, քանի որ տարբեր խաղերում նրանք հանդես են գալիս բոլորովին տարբեր բաղադրի հետ, երբեմն տարբեր հոլովներով: Օրինակ, մի երգում գրում է ՇԱՀԸՏ, ԱՀԸՏ, ՄԱՀԸՏ (խաղ 26), մյուսում՝ ՄԱՀԵՄԵՆ, ԱՀԵՄԵՆ, ՇԱՀԵՄԵՆ (խաղ 42):

Սալաթ-Նովայի հայերեն խաղերի մեջ գործածված բոլոր հանգախմբերի թիվը հասնում է 377-ի: Մենք այդ թվից չենք առանձնացնում կրկնվող հանգախմբերը, քանզի այդ խմբերը ամբողջությամբ չեն գործածվում զանազան երգերում, այլ նրանց որոշ բաղադրը միայն երբեմն թեքված, փոփոխված ձևերով մտնում են ուրիշ հանգախմբերի մեջ:

Վերցնենք ամենաշատ գործածված ՅԱՐ բառը, որ հանդես է գալիս իբրև հանգարար բառ 19 խաղում, 22 անգամ, բայց տարբեր կապակցություններում: Այսպես՝

ար	յար	բար	դիդար	յարին
յար	ջիգյար	սար	խար	արին
դավթար	(Չ) 27	յար	յար	ճանապարհին
(Գ) 16		(Ժ) 9	(Ժ) 9	(ԺԴ) 33

դարերով	սուսասբար	դալամքարի
շարերով	սաօար	դիդարի
յարերով	շաքար	նոքարի
չարերով	յար	յարի
խարերով	րուքար	շարքարի
(ԺԵ) 41	(ԺԹ) 23	(ԻԴ) 6

դարըս	դալամքար	յարեմեն
յարըս	յար	քարեմեն
կարըս	չինար	իդրարեմեն
չարըս	քար	ահուղարեմեն
սարըս	գովհար	(ԽԴ) 6
արըս	նուգրար	յարին
դարըս	(Լ) 7	էլթիբարին և այլն:

Ինչպես տեսնում ենք, Սալաթ-Նովան նույն բաղադրը միևնույն կապակցություններում չի գործածում, ուստի նրանց հաճախակի երևալը տեքստերում դրեթե աննկատելի է: Սա ևս խոսում է աշուղի մեծ վարպետության մասին:

Եթե ուշադրությամբ զննենք Սալաթ-Նովայի հանգարանը, կտեսնենք, որ նա չի նեղվել հանգեր ստեղծելիս, քանզի բառապաշարն առատ է ծովի պես: Նրա համար լեզվական աղբյուր է ժողովրդի բարբառը, ուր ամեն հասկանալի բառ խալիսի հասկացողությամբ հայերեն է: Իզուր են շատ ուսումնասիրողներ մեղադրում մեր աշուղին օտարամոռության համար: Նրա բառապաշարի ճնշող մասը հայերենն է: Այժմ, քանի որ մեր նյութը հանգարանն է, դիմենք նրան:

Աշուղի գործածած 377 խումբ հանգերից 148 խումբը հայերեն է, 151 խումբը՝ խառն (հայերեն և օտար բաղադրով) և միայն 74-ը՝ օտար բաղադրով:

Բայց այդ «օտար» բառերը ժողովրդի համար բոլորովին էլ օտար չեն և վերջինս գործ է ածում իր առօրյա խոսակցության ժամանակ: Բերենք մի քանի հանգամանքեր օտար բառերով, տեսնենք թե ո՞ր բառը չի հասկանում հայ մարդը.

հետաք	դադին	սեյրան	նոքար
սաբար	ադին	ջելրան	դուրգլար
ջուղար	բադին	հեյրան	ինքյար և այլ

Սրանք թուրքերենի միջոցով մեր լեզվին անցած և արդեն հայացված բառեր են ժողովրդի համար: Որոշ բառերի հայերենը ժողովուրդը գրեթե չի գործածում (օրինակ՝ հալ, ջիդյար, յար և այլն): Աշուղը երբեք չի աշխատել դիտավորյալ կերպով օգտագործել օտար բառեր, նա առաջնորդվել է ժողովրդին հասկանալի լինելու սկզբունքով և հասել է իր նպատակին:

Հարուստ ու գունագեղ և աշուղի հանգարանը, որի շնորհիվ նրա տաղերը առանց եղանակի էլ երաժշտական են: Նա կարողանում է օտար բառերը հայերեն հոլովելով հանգավորել հայերեն բառերի հետ ու ստեղծել զարմանալի ներդաշնակություն՝ իղրարին-արին (արյուն): Խառն հանգերը այնքան միաձուլ են ու կատարյալ, որ չի զգացվում, թե հայերին ու օտար բառերով են կազմված:

յախա	իմըն	զարդ	դընջանա
բան ա	սիմըն	դարդ	փընջան ա
դիմանա	հեքիմըն	մարդ	մընջանա
դամար	ճարըն	լուր	դժվար ա
համար	դարըս	ճար	չարա
քամար	խարըն	սար	նոքար ա

Բնական է, որ օտար բառերով կազմված հանգերը ևս պետք է կատարյալ լինեն, քանի որ նրանց մեծ մասը միահանգ վերջավորություն ունեն: Չոինակ, արաբերեն բառերի զգալի մասը վերջանում է Աթ-ով, ուստի դյուրին է այդպիսի բառերով ստեղծել ներդաշնակ հանգավորում:

նաբաթ	մուրվաթ	նալլաթ
չարբաթ	ջուրաթ	ջալլաթ
բաբաթ	սուրաթ	ադալաթ և այլն:

Բացի սովորական տողավերջի հանգավորումից Սայաթ-Նովայի 29 խաղն ունի նաև ներքին հանգավորում: Այս ելզը հորինված է նաղաշ Հովնաթանի «Թասերըն չինի, կարմիր գինի, մեզ անուշ լինի» երգի հետևողությամբ, բայց այնքան կատարյալ է ու երաժշտական, որ ոչ միայն գերազանցում է Հովնաթանին, այլև իր արվեստով, պատկերներով ու համեմատություններով անկրկնելի մի նմուշ է աշուղական պոեզիայի մեջ: Իրավացիորեն Գարեգին Լևոնյանը սույն երգը համարում է աշուղի երգերի պսակը, գլուխ-գործոցը:

Շուտ գանձ հանգամով, յիրգնային նամով
թուփըն թացվիլ է,
Խաղ կանչինք հանգով, լալերն ռանգով,
վարթըն բացվիլ է,
Սուսան սրմբուլով, դարբի բլրլուլով
բաղըն լըցվիլ է,
Մուտ բաղչեն նաղով, քիզ գովիմ սագով,
յար, իլթիմագով...

Իր հարստությամբ Սայաթ-նովայի հանգարանը մրցակից չունի, բոլոր հանգերը կատարյալ են, մոտավոր հանգեր, ասոնանսներ չկան, Ոչ մի բառ չի կարելի փոխարինել, ամեն ինչ իր տեղն է։ Բացի հանգավորումից, Սայաթ-նովան մեծ ուշադրություն է դարձրել նաև իր խաղերի լեզվի, ոճի, պատկերավորության վրա։ Այս հանգամանքը նույնպես արժանի է առանձին ուշադրության։